ԵՐԿՆՔԻ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ ՆՄԱՆ Է...

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ՄԱՏ. 13:31-35,44-52

Մանանեխի հատիկի առակը

Թթխմորի առակը

Ուռկանի առակը

Պահված գանձի և մարգարիտի առակը

44 *Երկնքի արքայությունը նման է* ***արտի մեջ թաքցված գանձի****, որը մի մարդ գտել է և թաքցրել: Նա ուրախությունից գնում և վաճառում է իր ամբողջ ունեցածն ու գնում է այդ արտը:*

45 *Դարձյալ, երկնքի արքայությունը նման է մի վաճառականի, որը գեղեցիկ մարգարիտներ է որոնում.* ***46*** *և մի թանկագին մարգարիտ գտնելով՝ գնում վաճառում է իր ամբողջ ունեցածը և գնում է այն:*

51 *Հիսուսը նրանց ասաց. Այդ բոլորը հասկացա՞ք: Նրան ասացին. Այո՛, Տե՛ր:* ***52*** *Նա ասաց նրանց. Դրա համար ամեն դպիր, որ երկնքի արքայությանն է աշակերտել, նման է տանուտեր մարդու, որն իր գանձատուփից նոր ու հին իրեր է հանում:*

«Երկնքի Արքայության» ուսմունքը մեծ թեմա է Հիսուսի համար: Ավետարաններում «Թագավորությունը» հիշատակվում է 126 անգամ:

- ***Ի՞նչ է Երկնքի Արքայությունը և ինչ չէ Աստծո Թագավորությունը.***

Հռ. 14:17 – Որովհետև Աստծու արքայությունն ուտելիք և խմելիք չէ, այլ արդարություն, խաղաղություն և ուրախություն Սուրբ Հոգով:

Հով. 18:36 – Հիսուսը պատասխանեց. ,Իմ թագավորությունն այս աշխարհից չէ: Եթե իմ թագավորությունն այս աշխարհից լիներ, ապա իմ հետևորդները կպայքարեին, որ ես հրեաների ձեռքը չմատնվեի. ուստի և իմ թագավորությունն այստեղից չէ:

1 Կոր. 4:8 - Արդէն կշտացած էք, արդէն հարստացաք, առանց մեզ թագաւորեցիք եւ երանի թէ թագաւորէիք, որ մենք էլ ձեզ հետ թագաւորէինք:

Սաղմոս 103:19 – Տերը երկնքում հաստատեց իր գահը, և նրա թագավորությունը տիրում է բոլորին:

1. ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄԱ Է, ԵՎ ԴԵՌ ՉԿԱ.

- ***Աստծո թագավորությունը գալիս է մարտահրավեր նետելու խավարի թագավորությանը.***

  Մատթեոս 11:12 – Հովհաննես Մկրտչի հայտնվելու օրերից մինչև այժմ երկնքի արքայությունը ուժով է վերցվում, և ուժեղներն են այն հափշտակում:

  Մատ. 4:17 - Այն ժամանակից Յիսուսն սկսեց քարոզել եւ ասել. Ապաշխարեցէք, որովհետեւ մօտեցել է երկնքի թագաւորութիւնը:

  Ղուկաս 11:20 – Բայց եթե ես Աստծու ձեռքով եմ դևերին հանում, ուրեմն Աստծու արքայությունը ձեզ վրա հասել է:

  Մատ. 4:23 - 23 Եւ Յիսուսը ման էր գալիս բոլոր Գալիլեայում՝ սովորեցնելով նորանց ժողովարաններում եւ քարոզելով արքայութեան աւետարանը, եւ ժողովրդի մէջ եղած ամեն հիւանդություն եւ ամեն ցաւ բժշկելով:

  Հիսուսի առաջին գալստյան ժամանակ Սատանան տեսավ, թե ինչպես են մարդիկ բժշկվում, ազատագրվում և մահացածները հարություն առնում: Թագավորության զորությունն ու իշխանությունը մոտ է, և թագավորների ԹԱԳԱՎՈՐԸ՝ Հուդայի Առյուծը, նորից գալիս է:

- ***Հայտնություն 21-ն ասում է մեզ, որ Աստծո Արքայությունը վերջապես եկել է.***

  Հայ. 21:9-11 – 9 ...Արի՛, քեզ պիտի ցույց տամ հարսին՝ Գառան կնոջը: 10 Եվ ինձ Հոգով տարավ մի մեծ ու բարձր լեռ և ցույց տվեց ինձ սուրբ քաղաքը՝ Երուսաղեմը, որ իջնում էր երկնքից՝ Աստծու մոտից: 11 Նա Աստծու փառքն ուներ, և նրա լուսավորությունը թանկարժեք քարի էր նման, ինչպես բյուրեղյա հասպիսը:

2. ԱՍՏԾՈՒ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՆՑ ՁԵՐ ՆԵՐՍՈՒՄ Է:

Ղուկաս 17:20-21 – Երբ փարիսեցիների կողմից հարց տրվեց, թե Աստծու արքայությունը ե՞րբ է գալու, նրանց պատասխանեց ու ասաց. Աստծու արքայությունը տեսանելի նշանով չի գալու, ոչ էլ կասեն. Ահա այստեղ է կամ ահա այնտեղ է. որովհետև ահա Աստծու արքայությունը հենց ձեր ներսում է:

- ***Դուք չեք կարող առանձնացնել Թագավորությունը թագավորից...***

  Կող. 3:15 – Եվ Քրիստոսի խաղաղությունը թող իշխի ձեր սրտերում...

- ***Երեք սկզբունք՝ Թագավորության Իշխանության դիրքորոշման համար.***

1. ***Ունեցեք ապաշխարող և խոնարհ սիրտ.***

   Հայտնություն 2:16 – Ապաշխարի՛ր. եթե ոչ, շուտով կգամ քեզ մոտ ու կմարտնչեմ նրանց հետ իմ բերանի սրով:

2. ***Փնտրեք Աստծո Թագավորությունը.***

   33 Դուք նախ Աստծու արքայությունն ու նրա արդարությո՛ւնը փնտրեք, և այդ ամենը ավելիով ձեզ կտրվի:

3. ***Մտածեք այն իշխանության մասին, որը ձեզ տրվել է Հիսուսի կյանքի, մահվան և հարության միջոցով.***

   Կող. 2:14-15 - 14 Եվ ջնջեց մեր դեմ դատավճռի ձեռագիրը և այն մեջտեղից վերացրեց ու խաչափայտին գամեց, 15 իշխանություններին և պետություններին մերկացնելով՝ հայտնապես խայտառակեց ու նրանց հաղթեց իրանում.

   Մատ. 16:19 - Եւ ես կտամ քեզ երկնքի արքայութեան բանալիները, եւ այն որ կապես երկրի վերայ, կապուած կլինի երկնքումը. եւ այն որ երկրի վերայ արձակես, արձակուած կլինի երկնքումը:

   Ղուկ. 10:19 - Ահա իշխանութիւնը տուի ձեզ, կոխել օձերի եւ կարիձների վրա եւ թշնամու բոլոր զօրութեանը վրա, եւ ձեզ ոչինչ չի վնասի:

- ***Ի՞նչ արժեք ունի Աստծո Թագավորությունը Ձեզ համար:***

ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՈՒՄ ԻՆՁ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: